29.03.25 - 12.04.25
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

2025 թ. Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպվող դպրոցականների ամենամյա օլիմպիադան կանցկացվի 2 փուլով:

Ս.թ. մարտի 29-ին՝ ժամը 11:00-ին, Երևանի պետական համալսարանում և ՀՀ բոլոր մարզերում կանցկացվի դպրոցականների օլիմպիադայի I փուլը:

Ս.թ. ապրիլի 12-ին՝ ժամը 11:00-ին, **Երևանի պետական համալսարանում** կանցկացվի դպրոցականների օլիմպիադայի II փուլը, որին կմասնակցեն I փուլի հաղթողները:

Օլիմպիադան կանցկացվի ***հանրակրթական*** (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ինֆորմատիկա) և ***լրացուցիչ կրթական*** (հայոց եկեղեցու պատմություն, տրամաբանություն, սոցիոլոգիա, պետության և իրավունքի հիմունքներ, էկոլոգիայի և կայուն զարգացման հիմունքներ, տնտեսագիտություն) առարկաներից:

Լրացուցիչ կրթական առարկաների օլիմպիադան կանցկացվի մեկ փուլով **ս.թ. ապրիլի 12-ին՝ ժամը 11:00-ին**, **ԵՊՀ-ում:**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am